

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ԱՊՅ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԶԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱԲՈՆԵՄԵՆՏԻ**  
**ՀԱՄԱԿԱՐԳԻ**  
**ԱՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս Կառավարությունների (այսուհետ՝ Կողմեր),  
ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին 1995

թվականի նոյեմբերի 3-ի՝ Համաձայնագրով,

ԱՊՅ մասնակից պետությունների միջգրադարանային աբոնեմենտը դիտելով որպես կարելու ազդու միջոց տեղեկատվական և գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության գործունեության ապահովման համար,

հաստատելով հավատարմությունը մարդու իրավունքների առումով պարտավորությունների և տեղեկատվության մատչելիությանը,

ելնելով միջգրադարանային աբոնեմենտի և գրադարանների, փաստաթղթերի ֆոնդերի ու տեղեկատվության մարմինների փոխադարձ օգտագործման մեխանիզմի կատարելագործման

գծով համագործակցության զարգացման փոխադարձ շահագրգռվածությունից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

#### ՀՈԴՎԱԾ 1

1. Կողմերը ստեղծում են ԱՊՅ մասնակից պետությունների միջգրադարանային աբոնեմենտի համակարգ (ՄԳԱՀ)՝ ՄԳԱ ազգային համակարգերի (այսուհետ՝ ՄԳԱՀ) և փաստաթղթային ֆոնդերի փոխգործակցության հիման վրա:

2. ՄԳԱՀ-ում միջգրադարանային սպասարկման համակարգման գործառույթները Կողմերը դնում են Ռուսական պետական գրադարանի վրա:

#### ՀՈԴՎԱԾ 2

1. Կողմերը, իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան, միջոցներ են ձեռնարկում արդյունավետ ՄԳԱՀ-ների ստեղծման և զարգացման համար, որոնք Կողմերի օգտագործողների համար ապահովում են գրադարանների ֆոնդերի և տեղեկատվության մարմինների առավելագույն մատչելիությունը՝ անկախ դրանց գերատեսչական պատկանելությունից:

2. Կողմերը որոշում են ՄԳԱՀ գլխադասային կազմակերպությունները՝ գրադարանների և տեղեկատվության մարմինների գործունեության համակարգման իրականացման համար: Մի քանի գլխադասային կազմակերպությունների առկայության դեպքում դրանցից մեկը լիազորվում է միջգրադարանային աբոնեմենտի ազգային կենտրոնի գործառույթներով, որը պատասխանատվություն է կրում գիտական, մեթոդական

և կազմակերպական ապահովման համար և ՄԳԱՀ պահանջների պահպանման համար:

3. Կողմերը պարտավորություն են ստանձնում ՄԳԱՀ և միջգրադարանային կենտրոնների իրավական և ֆինանսատնտեսական օժանդակության և պայմանագրային

հիմունքներով ՄԳԱՀ զարգացման գծով:

ՄԳԱՀ-ում միջգրադարանային սպասարկման համակարգման գծով աշխատանքների ֆինանսավորումը իրականացվում է միջգրադարանային աբոնեմենտի ազգային կենտրոնների բաժնեմասային ներդրումների հաշվին:

#### ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը համաձայնեցված միջոցներ են ձեռնարկում ՄԳԱԸՅ փոխգործակցության ապահովման եւ Կողմերի արձեմնետներին փաստաթղթեր եւ տեղեկություններ անխափան տրամադրելու համար:

#### ՀՈԴՎԱԾ 4

1. Սույն Համաձայնագրի իրագործման համար Գիտատեխնոլոգիական զարգացման միջպետական կոմիտեի (այսուհետ՝ ԳՏՁ ՄԿ) կառուցվածքում ստեղծվում է Բաժին: Բաժնի գործառույթները, աշխատանքային մարմինները, տեղակայման վայրը եւ գործունեության ֆինանսավորումը որոշվում է նրա մասին Կանոնադրությամբ, որը ԳՏՁ ՄԿ ներկայացվում է Տնտեսական միության միջպետական տնտեսական կոմիտեի

(այսուհետ՝ ՄՏԿ):

2. Սույն Համաձայնագրի իրագործման համար, որպես առաջնային միջոցներ, Բաժինը մշակում եւ հաստատված կարգով ՄՏԿ է ներկայացնում.

ա) ՄԳԱԸՅ մասին Նորմատիվ-իրավական փաստաթղթերի նախագծեր. միասնական ՄԳԱԸՅ չափանիշների մասին (այդ թվում՝ ՄԳԱԸՅ գծով ուղարկվող փաստաթղթերի ցանկը),

փոխանցվող փաստաթղթերի պահպանության ապահովման մասին, ուղարկվող փաստաթղթերի մաքսատուրքերի չափերի մասին, փաստաթղթերի ուղարկման համար արտոնյալ փոստային սակագներ մտցնելու մասին,

բ) Կողմերի գրադարանների եւ տեղեկատվության մարմինների ֆինանսատնտեսական մեխանիզմների եւ նրանց միջեւ փոխադարձ հաշվարկների ու վճարումների համակարգի մասին առաջարկություններ:

3. Սույն հոդվածում հիշատակված աշխատանքների կատարման համակարգումը եւ դրանց իրագործման նկատմամբ հսկողությունը իրականացնում է ԳՏՁ ՄԿ-ն:

#### ՀՈԴՎԱԾ 5

ՄԳԱԸՅ աշխատանքը կանոնակարգող հիմնական փաստաթղթերի մշակման համար, Կողմերը միջոցներ կձեռնարկեն.

իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան, համարժեքության հիման վրա, արձեմնետների հարցումներով գրադարանների եւ տեղեկատվության մարմինների ֆոնդերից բնօրինակով կամ պատճենով փաստաթղթերի տրամադրում՝ անկախ դրանց գերատեսչական պատկանելությունից,

ՄԳԱԸՅ գծով ստացված փաստաթղթերի պահպանության համար, իսկ վնաս հասցնելու դեպքում՝ ֆոնդի տիրապետողի պահանջներին համապատասխան փոխհատուցման համար,

փաստաթղթերի պատվիրման եւ ներկայացման միասնական ընթացակարգերի պահպանման համար,

ՄԳԱԸՅ հարցերով գործնական գրագրության վարում ռուսերենով:

#### ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այլ միջազգային պայմանագրերով Կողմերի ստանձնած պարտավորությունները:

#### ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ

բանակցությունների միջոցով:

#### ՀՈԴՎԱԾ 8

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին՝ կարգավորելով Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

#### ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կձեւակերպվեն առանձին արձանագրություններով եւ ուժի մեջ կմտնեն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով:

#### ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

#### ՀՈԴՎԱԾ 11

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ պետությունների համար, որոնց օրենսդրությունը դրա ուժի մեջ մտնելու համար պահանջում է ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան փաստաթղթերը հանձնելու ժամկետից:

#### ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ այդպիսի միացման մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

Կատարված է Սարատով քաղաքում 1999 թվականի հունվարի 13-ին մեկ բևորինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

\* Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրը ստորագրել է վերապահումով.  
"1. Բացառել 4-րդ հոդվածի 1-ին կետը:

\*\* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերի 20-ից: